

### ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր տարին բոլորին կողմէն շատ սպասուած՝ ամենաերջանիկ տօնն է, որ ձմրան ցուրտ օդին, բոլորը կը համախմբէ մէկտեղ ու բոլորին սրտերը կը լեցնէ անսահման ջերմութեամբ եւ ուրախութեամբ: Շատեր, ըստ ասանդոյթի, 31-ի գիշերուան ժամը 12-ին լոյսերը իսկոյն կը մարեն, բոլոր ծորակները կը բանան, որպէսզի առատ ջուր հոսի, նոր տարուան ընթացքին որեւէ մէկ բանի պակաս չունենան եւ յաջողութիւնները ըլլան անսահման: Բոլորիս ծանօթ է, որ մանաւանդ փոքրիկները շատ կը սիրեն այս տօնը, որովհետեւ կը ստանան բազմաթիւ նուէրներ: Սակայն այս տարի, մինչ մենք մեր ընտանիքներուն եւ սիրելիներուն հետ ժամանակ կ'անցընէինք, արցախահայութիւնը կտրուած էր դուրսի աշխարհէն: Շաբաթներով Արցախը Հայաստանին եւ այդպիսով՝ աշխարհին կապող միակ ճանապարհը, փակուած էր բնապահպանական պատճառաբանութիւններու ետեւ պահուղտող ազերիներու կողմէ: Զմրան ցուրտ օդին, Արցախի 120000 բնակիչները մնացած էին առանց սնունդի, առանց դեղերու եւ ելեկտրականութեան:



Ծնողներ բաժնուած էին իրենց երեխաներէն առանց տուն վերադառնալու կարելիութեան: Ծանր պայմաններու մէջ գտնուող հիւանդներ կը մահանային, որովհետեւ կարելի չէր ըլլար զանոնք աւելի մասնագիտական հիւանդանոցներ փոխադրել: Ամէն օր, այս տագնապը աւելի կը բարդանար՝ մայրուղիին բացումը դարձնելով անյետաձգելի: Այս շրջափակումը Ատրպէյճանի ամենանոր փորձերէն մէկն էր Արցախի մէջ բնակող հայերուն բնաջնջման ենթարկելու, եւ վստահաբար վերջինը պիտի չըլլայ: Ուստի, մեր նոր տարուան նպատակակէտերէն կարեւորագոյնը պէտք է ըլլայ ամէն ձեռով թեւ ու թիկունք կանգնիլ մեր ժողովուրդին՝ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն: Նաեւ ամէն օր գործել, որ մեր հայրենիքը ըլլայ քիչ մը աւելի ապահով, հզօր ու բարգաւաճ: Զգտինք ըլլալ միասնական եւ անվերջ պայքարինք մեր եւ մեր ժողովուրդին արդար իրաւունքներուն համար, մինչեւ որ շուշեցին իսկ խաղաղ երկնքի տակ, իր սիրելիներով շրջապատուած, իր տաքուկ եւ լուսաւոր տան մէջ դիմաւորէ Նոր Տարին:

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

### ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ



Ծնած է 4 Յունուար 1866-ին, Սուրմալու գաւառին մէջ: Անոր մայրը՝ Զարդարը, գիւղի միակ կարդալ-գրել գիտցող կինը եղած է եւ շատ փոքր տարիքէն մեծ կարեւորութիւն տուած է զաւակին ուսումին: Հօր մահուան պատճառով՝ Ահարոնեան կարճ ժամանակ մը ստիպուած եղած է ընդհատելու նախակրթարանէն ներս իր ստացած ուսումը եւ աշխատանքի անցնելու: Բայց անոր ընդունակութիւններուն ծանօթ վարժարանին տնօրէնը՝ Դաւիթ Քալանթարեանը, նախ նախակրթարան վերադարձուցած է Ահարոնեանը, ապա դասաւորած, որ Աւետիս ընդունուի Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որուն յեղափոխաշունչ մթնոլորտին մէջ թրծուած են անոր միտքն ու հոգին: Ըստ վկայութիւններու Աւետիս Ահարոնեանի մէջ բոցավառուած է

ազատութեան տենչը, երբ պատանի տարիքին ան ընթերցած է Միքայէլ Նալպանտեանի «Երգ ազատութեան» բանաստեղծութիւնը:

Իր մշակած հայերէնը եղած է շատ առանձնայատուկ եւ ունեցած է բանաստեղծական շունչ: Մեր լեզուի գոյգ թելերուն՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ամենագեղեցիկ հարստութիւնները միաձուլած եւ նորովի հնչեցուցած է ան:

Աւետիս Ահարոնեանէն առաջ, հայ յեղափոխաշունչ գրականութեան ճամբէն քալած են արդէն **Խաչատուր Աբովեան** եւ **Րաֆֆի**: Բայց եթէ անոնք պատմութենէն եւ մեր ժողովուրդին հերոսական անցեալէն կը ներշնչուէին՝ իրենց վիպականացուցած հերոսները կեանքի բերելու համար, Ահարոնեան իր ողջ էութեամբ ընդգրկուած էր հայոց ազատամարտի կենդանի հերոսներուն հետ: Այդ պատճառով է, որ հայ ժողովուրդի 19-րդ դարավերջին ազգային կեանքին եւ ժողովրդային իրականութեան հայելին եղած է Ահարոնեանի գրականութիւնը:

Ան օժտուած էր ներքին միասնութիւն առաջացնելու կարողութեամբ: 1920 թուականին, որպէս Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ ստորագրած է Սեւրի դաշնագիրը:

Իսկ անկախութեան կործանումէն ետք հաստատուած է Փարիզ, ուր շարունակած է իր ստեղծագործական գործունէութիւնը:

Աւետիս Ահարոնեան մարմնաւորումը եղած է լռել չգիտցող, եւ աւելին՝ ստրկային հնազանդութեան լռութիւնը մերժող հայու, որ իր գրիչով ու խօսքով ոտքի հանած է սերունդներ:

Դժբախտաբար 11 Փետրուար 1934-ին, Մարսէյի մէջ ելոյթի մը ընթացքին, ուղեղի կաթուածի պատճառով Աւետիս Ահարոնեան անդամալուծուած է եւ ընդմիշտ լռութեան դատապարտուած: Անոր արտասանած վերջին բառերը եղած են «Հայ բանակը»:



### ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

«Շունչդ տուր, հոգիդ տուր, բայց հայրենիքդ մի տար թշնամիին»:

«Ձեզի կ'ըսեմ, ձեզի, հայ նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնիմ, ձեր արեւին մատանդ, տասը լեզու սորվեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատքը ամուր պահեցէք»:

### ՐԱՖՖԻ

«Օտարի օգնութենէն մեզի շահ չկայ: Դժբախտ է այն ազգը, որ օտարի օգնութեան կարօտ կը մնայ»:

«Մէկ բան կայ, որ աշխարհի զանազան ծայրերէն կրնայ միաւորել հայերը հոգիով, միտքով եւ արիւնով, այն է՝ ազգային սէրը»:



## Բանաստեղծություն

### Երնէկ, թէ այս նոր տարին

Երնէկ, թէ այս նոր տարին  
Վերջ տար հայի ցաւերին,  
Չարը կորչէր ու բարին  
Բուն դներ մեր սրտերին:

Երնէկ, թէ այս նոր տարին  
Ազատ շնչէր Հայաստան,  
Եւ շուրջ Մասիս մեր սարին  
Փայլէին վարդ-անդաստան:

Երնէկ, թէ այս նոր տարին  
Հայ ազգ ի մի գումարուէր,  
Ի գլուխ Կարնոյ հայ ամրին  
Հայի դրօշակ ծածանէր:

Երնէկ, թէ այս նոր տարին  
Ոտքի կանգնէր Հայաստան,  
Եւ կիսաքանդ մեր Կարին  
Լինէր քաղաք մեր ոստան:

Հայեր, երբեք չերկմտիք,  
Կը կատարուի այդ ամէն,  
Եթէ ի սպառ մենք հանենք  
Փոքրոգութիւն մեր սրտէն:

### Ռաֆայէլ Պատկանեան

### Ո՞վ եմ ես

Առաջին տառս կը գտնուի «արդի»-ին մէջ, բայց ոչ՝ «դար»-ին:  
Երկրորդ տառս կը գտնուի «նուռ»-ին մէջ, բայց ոչ՝ «ուռի»-ին:  
Երրորդ տառս կը գտնուի «քար»-ին մէջ, բայց ոչ՝ «սարսափ»-ին:  
Չորրորդ տառս կը գտնուի «նկար»-ին մէջ, բայց ոչ՝ «կարմիր»-ին:  
Հինգերորդ տառս կը գտնուի «փող»-ին մէջ, բայց ոչ՝ «ղափամա»-ին:  
Վեցերորդ տառս կը գտնուի «փրփուր»-ին մէջ, բայց ոչ՝ «թուփ»-ին:  
Եօթներորդ տառս կը գտնուի «խորթ»-ին մէջ, բայց ոչ՝ «թիրախ»-ին:  
Ութերորդ տառս կը գտնուի «շերտ»-ին մէջ, բայց ոչ՝ «տերեւաթափ»-ին:  
Իններորդ տառս կը գտնուի «փոքր»-ին մէջ, բայց ոչ՝ «քարափ»-ին:  
Տասներորդ տառս կը գտնուի «կտաւ»-ին մէջ, բայց ոչ՝ «յատակ»-ին:  
Տասնմէկերորդ տառս կը գտնուի «մակերես»-ին մէջ, բայց ոչ՝ «երկարահասակ»-ին:

Պատասխան .- *ինքնորոշում*



## Ինչ նորություն

«C-rouge», իսկական անունով՝ Սերուժ Պաղտասարեան, ծնած է արուեստագէտներու ընտանիքի մը մէջ եւ կանուխ տարիքէն ցուցաբերած մեծ սէր երաժշտութեան նկատմամբ: Ան վերջին 15 տարիներուն ընթացքին վերամշակած է բազմաթիւ ամանդական հայկական երգեր ինչպէս «Տիէ Եաման», «Մարտիկի երգը» եւ «Արի արի»: Ան նաեւ միաձուլած է հայկական երգերու մեղեդիներ ելեկտրոնական հնչիւններու հետ, որոնցմէ օրինակներ են «Հայ ֆետայիներ» եւ «Թող հնչեն շեփոր»:  
Համոզուած ենք, որ իւրաքանչիւր մշակութասէր հայ երիտասարդ պիտի ցանկար ունկնդրել այս ստեղծագործութիւնները: C-rouge-ին առանձնայատկութիւնն է՝ հնչեցնել ինն ազգագրական եւ ժողովրդական մեղեդիներ արդի եղանակաւորումով:

Ահաւասիկ մի քանին.

- Invincible Nation
- Vengeance
- Heroes of Musa Dagh
- Freedom Fighters

Բարի վայելում



### Գիտէիր թէ

Այս Յունուար 28-ին Հայկական բանակի 31-րդ ամեակն է: Անոր կազմաւորումը մեր նորանկախ պետականութեան ամենակարեւոր նուաճումներէն մէկն է: Այս ամիս առիթ է յիշելու բոլոր զանոնք, որոնք Արցախի եւ Հայաստանի սահմաններու պաշտպանութեան սիրոյն զոհած են ամենաթանկագինը՝ իրենց կեանքը: Նաեւ առիթ է յիշելու բոլոր զանոնք, որոնք տակաւին օրն ի բուն կը պաշտպանեն մեր նահատակներուն արեամբ գծուած այդ սահմանները, որպէսզի մեր ժողովուրդը ապրի ազատ՝ կապոյտ եւ խաղաղ երկինքի տակ: Մեր բանակը պատուով կատարած է իր պարտքը մեր հայրենիքի անկախութեան սպառնացող բոլոր պատերազմներուն ընթացքին: Տօնդ շնորհաւոր, Հայկական բանակ:



**Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմագէտ**

Յունուար ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 2023 Փետրուար 2-ն: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝ 3401 Oliver Asselin Montreal, Canada H4J 1L5

**1-Ինչո՞ւ շատեր 31-ի գիշերուան ժամը 12-ին լոյսերը կը մարեն եւ բոլոր ծորակները կը բանան:**

- ա. Որպէսզի նոր տարին անցընեն ջուրի խաղերով, իրարու վրայ ջուր թափելով:
- բ. Որպէսզի շուտ քնանան:
- գ. Որպէսզի նոր տարուան ընթացքին որեւէ մէկ բանի պակաս չունենան, եւ յաջողութիւնները ըլլան անսահման:

**2- Ի՞նչ է նոր տարուան մեր նպատակակէտերէն ամէնէն կարեւորը:**

- ա. Ամէն ձեռով թեւ ու թիկունք կանգնիլ մեր ժողովուրդին՝ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն:
- բ. Խաղեր խաղալ:
- գ. Պտոյտի երթալ:

**3- Աւետիս Ահարոնեանէն առաջ, հայ յեղափոխաշունչ գրականութեան ճամբէն քալած են...**

- ա. Միսաք Մեծարենց եւ Րաֆֆի:
- բ. Վահան Տէրեան եւ Րաֆֆի:
- գ. Խաչատուր Աբովեան եւ Րաֆֆի:

**4- Աւետիս Ահարոնեան 1920 թուականին, որպէս Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ, ի՞ր դաշնագիրը ստորագրած է:**

- ա. Պերլինի դաշնագիրը:
- բ. Սեւրի դաշնագիրը:
- գ. Սան Սթեֆանոյի դաշնագիրը:

**5- Աւետիս Ահարոնեան ազատութիւնը սիրող, ստրկային հնազանդութեան լռութիւնը մերժող հայ մըն է, որ իր գրիչով ու խօսքով ոտքի հանած է սերունդներ:**

- ա. Ճիշդ:
- բ. Սխալ:

**6- Ամբողջացոր Խաչատուր Աբովեանի խօսքը. «Ձեզի կ'ըսեմ, ձեզի, հայ նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնիմ, ձեր արեւին մատնիմ, ... »:**

- ա. Տասը լեզու սորվեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատքը ամուր պահեցէք:
- բ. Միայն երկու լեզու սորվեցէք:
- գ. Տասը լեզու սորվեցէք եւ ձեր սովորութիւնները ուրիշ ազգերու փոխանցեցէք:

**7- Ե՞րբ է Հայկական բանակին ծննդեան տօնը:**

- ա. 28 Փետրուարին:
- բ. 28 Յունուարին:
- գ. 10 Օգոստոսին:

**ԲԱԶՄԱԳԷՏԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022-Ի ԹԻԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒ ՑԱՆԿ**

**Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան**

Ճիշդ պատասխանողներու ցանկ

- Վէմ-Գառն Աճէմեան
- Մաքսիմ
- Կրէթա Թեր-Թերեանց
- Արիա Թալաթինեան
- Մարիա Շահինեան
- Սեանա Խորէն
- Ալեքսի Մանուքեան
- Ռազմիկ Քէօսէեան
- Նօա Օհանեան
- Էսմերալտա
- Գայեանէ Մարգարեան
- Արին Բաբախեան
- Լիանա Թեմուրեան
- Սէրուժ Մանուկեան
- Սերժ Պաշուր
- Լուի Փարթամեան
- Կապրիէլ Ապրաքեան
- Շուշան Աճէմեան
- Կալի Սեւեան
- Էդուարդ Գրիգորեան
- Հէնրիք Խաղնաճեան
- Մաթիաս Ռիտ
- Արամ Տօնիկեան
- Ամիլիա
- Ճուլիան
- Մարիա
- Անահիտ Մարքոսեան
- Ալեքս Քոյունճեան
- Քրիսթոֆըր Շուրալեան
- Նարեկ Քիրտօղլանեան
- Պենճամին Գաւուքեան-Մոսֆու
- Արենի Քէօրօղլեան
- Քրիստիան
- Ատրինէ Զաքարեան
- Տեսիլ Մկրտիչեան
- Կարպիս Ադամեան
- Ժոզէֆ Կիլեան
- Անհելօ Քեյրուզ
- Մայքըլ Մալքոնեան
- Օլիվիա Իսիակ
- Արիանա Մոմճեան
- Էմմա Ժարլեան
- Ալեքսա Նազարեան
- Փաթիլ Ղազարեան
- Ալիք Փալանճեան
- Սաշա Ապոս
- Վարդան
- Ռաֆայէլ Բարսաքեան
- Էվըն Գալայճեան
- Շանթ Կարապետեան
- Ալեք Արապաթեան



Մասնակցողներու ցանկ

- Արեգ Մոմճեան
- Մարլ Մկրտիչեան
- Միքայէլ Մելքոնեան
- Յովիկ Թոմասեան
- Թայլըր Տիպ
- Կալի
- Ճէսիքա Մխճեան



Բախտաւոր մասնակցողն է Արին Բաբախեան



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757  
 Email: sylvia@horizonweekly.ca  
 Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի  
 Թիւր պատրաստեց Արիանէ Թասլաքեան  
 Ձեռայլացք՝ Լորի Խաչերեանի